## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1

**30.04.2024թ. կնքված N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2024/18Հ հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի**

**ք. Երևան** **« 19 » « 06 » 2025թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ա. Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ճանապարհ ինստիտուտ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ. Քարտաշյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, հիմք ընդունելով Կողմերի միջև 30.04.2024թ կնքված N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2024/18Հ պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5, 7.13 կետերը և ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի 5-ի N 727-Ն որոշումը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

***Կողմերը որոշեցին՝***

1.1 Պայմանագրի 4-րդ կետի 4.1 ենթակետը լրացնել նոր պարբերությամբ և այն շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«2025 թվականին մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **6 717 959** (վեց միլիոն յոթ հարյուր տասնյոթ հազար ինը հարյուր հիսունինը) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն: »

1.2 Հաստատել Պայմանագրի N 2 Հավելվածով սահմանված 2025թ. նոր Վճարման ժամանակացույցը՝ համաձայն սույն Համաձայնագրի Հավելված 1-ի:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

### 3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | «Ճանապարհ ինստիտուտ» ՍՊԸ |
| ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3, | ՀՀ, ք. Երևան, Աճառյան 54բ |
| ՀՀ կենտրոնական գանձապետարան | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| ՀՀ 900011002632 | ՀՀ 2050022451291001 |
| ՀՎՀՀ 02815457 | ՀՎՀՀ 00813453 |
| գլխավոր քարտուղար | Տնօրեն |
| Ա. Երիցյան | Դ. Քարտաշյան |
| ______________ /ստորագրություն/ | ______________ /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հաստատված է
N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2024/18Հ գնման պայմանագրի
«19» «06» 2025թ. կնքված
Թիվ 1 Համաձայնագրով
Հավելված 1

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**/Մ-2/ - Տաթև - Աղվանի - /Մ-2/ (Սյունիք) միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ19+500 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայություններ**

(ՀՀդրամ)

| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Գնման ենթակա ծառայությունների անվանումը | Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| 1 | 98111140/4Ձ | Հեղինակային հսկողության ծառայություններ | – | – | – | – | – | – | 6 717 959 | 6 717 959 | 6 717 959 | 6 717 959 | 6 717 959 | 6 717 959 | 6 717 959 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ |
| ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3, | ՀՀ, ք. Երևան, Աճառյան 54բ |
| ՀՀ կենտրոնական գանձապետարան | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| ՀՀ 900011002632 | ՀՀ 2050022451291001 |
| ՀՎՀՀ 02815457 | ՀՎՀՀ 00813453 |
| գլխավոր քարտուղար | Տնօրեն |
| Ա. Երիցյան | Դ. Քարտաշյան |
| ____________________ /ստորագրություն/ | ____________________ /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |